

ԱՐՔՄԵՆԻԿԱՆԻԿՐՈՊԵԶԱՆ

Բ. գ.թ., <<ԳԱՎ Գրականության ինստիտուտ»

ՄԻ ՎՐԻՊԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

(Խոնա՞րի, թե՞ Խոնարիս)

Բանափի բառեր – տեքստ, տարրնթերցում, վրիպակ, ակադեմիական, հոգեբանություն, ծանոթագրություն, կազմոյ, իրատարակություն, տարրերակ:

Գրական այնպիսի տեքստը, ինչպիսին Ակսել Բակունցի «քարաքանդակ» բնագիրն է իր լավագույն իրացումներում, պատահականություններ չի ճանաչում, և յուրաքանչյուր տաօք երբեմն ուղղակի վճռորոշ դերակատարություն կարող է ունենալ տվյալ պահի, իրադրության, հոգեվիճակի, տեքստային անցման, ամրագրման, դադարի դեպքում:

Այն, որ Ակսել Բակունցն այս կարգի մասնավորություններին մեծ ուշադրություն է դարձրել, նորություն չէ, և լավագույն երևանի մասնակի նրա աշխատանոցային ոճի մեջ, բացի այդ, հիմնական մասով վերլուծվել է Սերգեյ Արաբեկյանի «Ակսել Բակունց. խոսքի և լրության... պոեզիան» մենագրության բազմաթիվ էջերում¹:

«Խոնարի առջիկը» պատմվածքը թերևս ամենավերլուծվածն է բակունցյան գլուխգործոցներից, և հետաքրքիրն այն է, որ նոյնիսկ շարքային ու հերթապահ անդրադարձներում այս պատմվածքի հոգեբանական վիճակները առանձնահատուվ ուշադրության են արժանացել:

Բակունցի ստեղծագործությանը նվիրված՝ գոևէ ինձ ծանոթ գրեթե բոլոր անդրադարձներում, «Խոնարի առջիկը» պատմվածքի հոգեբանական սևեռումներից մեկը պարտադիր առկա է: Հետաքրքիր է, որ ինդրահարուց վրիպակը հենց դրան է վերաբերում և դրա ճշգրտումը կտրուկ փոխում է այդ հոգեբանական իրադրության և՛ ընկարումը, և՛ մեկնաբանությունը: Ուստի, մեջբերեմ նախ այն տեսքով, ինչպես տեղ է գտել Ակսել Բակունցի երկերի ակադեմիական իրատարակության մեջ: «Կողքին Խոնարին էր: Նրա աչքերում

*Հոյվածն ընդունված՝ տպագրության 06.03.2020 թ.:

1 Տե՛ս Սերգեյ Արաբեկյան, Ակսել Բակունց. խոսքի և լրության... պոեզիան, Երևան, 2000:

ուրախության ժախտ կար: Աչքերը փայլում էին սարյակի փետուղների նման սև: Զեռքը բռնեցի:

- **Խոնարի...-** Զայնս դրդաց»¹ (ընդգծումը իմ է. - Ա. Ն.):

Պատմվածքի ծանոթագրություններում խոսք անգամ չկա ընդգծված բարի որևէ տարընթերցման կամ Վրիպակի մասին²: Սա այն դեպքում, երբ հատորը հրատարակության պատրաստած և ծանոթագրությունները կազմած Շաֆայել Իշխանյանը չափազանց բժախինդիր է նման հարցերի նկատմամբ, և շատ առումներով բացառիկ գիտական ապարատ է ապահովել բակունցյան բնագրերի համար:

Այժմ մեջբերեմ նոյն հատվածն արդեն Ակսել Բակունցի՝ «Հայ դասականների գրադարան» մատենաշարուվ լուս տեսած երկերի միհատորյակից, որը կազմել է Ա. Քիշոյանը: «Կոորդինունարին եր: Նրա աչքերում ուրախության ժախտ կար: Աչքերը փայլում էին սարյակի փետուղների նման սև: Զեռքը բռնեցի:

- **Խոնարի...-** Զայնս դրդաց»³ (ընդգծումը իմ է. - Ա. Ն.):

Տրամաբանական է մտածել, որ հատորը կազմողն օգտվել է Բակունցի երկերի ակադեմիական հրատարակությունից, տրամաբանական այն առումիվ, որ այդպես է պահանջում տեքստաբանության օրենքն ու ոգին⁴: Ուստի, մնում է ենթադրել, որ Վրիպակ է գնացել: Բայց ինչի՞նը բարդանում է նրանով, որ **Խոնարիս** տարբերակը և՛ նշված ժողովածուից առաջ, և՛ հետո, առկա է բազմաթիվ հրատարակություններում, ժողովածումներում, դասագրքերում, քրեստոմատիաներում: Ավելին՝ գրականագիտական տարրեր ու-

1 **Ակսել Բակունց,** Երկեր 4 հատորով, հատոր 1, Երևան, 1976, էջ 157:
2 Տե՛ս նոյն տեղը, էջ 637-641:

3 **Ակսել Բակունց,** Երկեր, Երևան, 1986, էջ 124: Զավեշտայի է, որ Վիքիպեդիայում, որտեղ թվայնացված է Բակունցի երկերի ակադեմիական հրատարակության առաջին հատորը, կրկին կիրառվել է **Խոնարիս** ձևը: Անհասկանայի է, թե ինչու, երբ տպագիր տեքստում **Խոնարի** է: Տե՛ս https://hy.wikisource.org/wiki/%D4%BD%D_5%8B%D5%B6%D5%A1%D6%80%D5%BO_%D5%A1%D5%B2%D5%BB%D5%AB%D5%AF%D5%A8

4 Մյուս կողմից՝ ցավայի է, բայց փաստ, որ հայ դասական հեղինակների տարաբնույթ ժողովածուներ կազմողները շատ հաճախ օգտվում են այդ պահին ծերքի տակ եղած կամ մատչելի աղբյուրներից՝ անզունելով ակադեմիական հրատարակությունները, որուցում բասգրերը շատ ավելի կանոնիկ են ու ճշգրտված: Իհարկե, կան նաև բացառություններ. մասնավորապես, Միքայել Նալբանդյանի հայտնի գործերից մեկը՝ «Մեռեմահարցովք» վեճը. նրա վերջին ակադեմիական հրատարակությունում տպագրվել է տպագրական մի շատ եական վրիպակով (հատված է բացակայում և մեկ այլ հատված կրկնվում է), տե՛ս **Միքայել Նալբանդյան,** Երկերի լիակատար ժողովածու, հատոր 1, Երևան, 1979:

սումասահրովարյուներում, հոդվածներում, մենագրություններում այդ հատվածը հաճախ է ներկայացվել **Խոնարիս** ձևով: Եվ վերլուծվել է **ա-ի** գոյության աշքած տրամաբանությամբ:

Բակունցի կենդանության օրոր լուս տեսած տարբերակներում առկա է հետևյալ պատկերը: Պատմվածքը «Խոնարի աղջիկ» վերնագրով առաջին անգամ լուս է տեսել 1927 թվականին «Խորհրդային Հայաստան» օրաթերթի Երկու համարում շարունակաբար՝ Ակսել Աստորագրությամբ:¹ Այստեղ ինդրահարուց հատվածը հետևյալ տեսքն ունի. «Ես չեմ լսում, կողքին Խոնարին եր: Նրա աչքերում ուրախության ժայիտ կար, ժայիտ սև աչքերը փայլում են սարյակի փետուրների պես: Այդ աչքերը, երկու ծիթապտուղ:»

Ձեռքը բռնեցի:

- **Խոնարի** - ձայնս դրդացաց²: Գրեթե նոյն տեսքն ունի հատվածը «Մթնաձոր» ժողովածուլում³: Արմատապես վերամշակվելով և գետեղվելով 1933-ին լուս տեսած «Սև ցելերի սերմանցանը» ժողովածուլ, պատմվածքում կրկին պահպանվել է **Խոնարի** ձևով:

Հետոմահու հրատարակություններում 1938 թվականի «Պատմվածքներ» ժողովածուի փարիզյան հրատարակությունում (Եջ 34), Երկերի Երևակյան 1955 թվականի հրատարակության մեջ, և այլն, նոյն պատկերն է:

Դժվար է միանշանակ պնդել, թե ե՞րբ է սկիզբ առել այս տարբերցումը կամ վրիհպակը, բայց փաստ է, որ **Խոնարիս** ձևով համատարած կիրառություն է սկսում գտնել Ակսել Բակունցի՝ «Հայդասականների գրադարան» մատենաշարուվ լուս տեսած Երկերի միհատորյակի լուս ընծայումից հետո, 1986 թվականից: Սա ինչ-որ տեղ բնական է ընդհանուր հիշողության տեսանկյունից, քանզի սա Բակունցի ամենամեծ տպաքանակով լուս տեսած գիրքն է (51. 000) և ամենից շատը է շրջանառվել: Բակունցի Երկերի՝ 1986 թվականից հետո լուս տեսած հրատարակություններում⁴ բացառապես Նշված չէ, թե Ներկայացվող տեքստերը ինչ հրատարակության հիմնա վրա են պատրաստվել: Բացառված չէ, որ կազմողները (Շորս Դավթյան, Դավիթ Գասպարյան, Մեյրանուի Գեղամյան և ուրիշներ) հենվել են ակադեմիական հրատարակության տեքստերի վրա, բայց 1986

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1927, թիվ 24, 1 փետրվարի, թիվ 25, 2 փետրվարի:

2 «Խորհրդային Հայաստան», 1927, թիվ 25, 2 փետրվարի:

3 Տե՛ս **Ակսել Բակունց**, Մթնաձոր, Երևան, 1927, Եջ 147:

4 Տե՛ս, օրինակ, Երկեր, Երևան, 1999, Ծիրանի փողը, Երևան, 2003, Ընտրանի, Երևան, 2009, Պատմվածքներ, Երևան, 2013 և այլն:

թվականի հրատարակության հիշողությունը **Խոնարիս** ձևի կիրառության առումով իր նստվածքը բոլել է, քանզի այս բոլոր հրատարակություններում հենց այդ կիրառությունն է:

Այս հրապարակման նպատակը «Խոնարի առջիկը» պատմվածքի վերը նշված հատվածում **Խոնարիս** սիալ կիրառության փոխարինումն է **Խոնարի** ճիշտ ձևում՝ Ակսելի Բակունիցի երկերի հետագա հրատարակություններում, ինչպես նաև դրա հենքով՝ պատմվածքի վերլուծության գերծումը հոգեբանական սիալ մեկնություններից: Հարցն այն է, որ «Խոնարի առջիկը» **բառերով չխոստովանված** սիրո պատմություն է: Սիրո բազմաթիվ ակնարկներ, քայլեր կան պատմվածքում, սակայն այն երբեք չի ասվում խոսքով: Եվ սրա մեջ է պատմվածքի հմայքը: Դեռևս Ռաֆայել Իշխանյանն է նկատել, որ այդ դրվագը պատմվածքի հերոսների «սիրո բարձրակետ»-ն¹ է: Բարձրակետ, որտեղ այնուամենայիվ, չի արվում ամենավճռական քայլը՝ **չի բառավորվում խոստովանությունը**՝ երիտասարդ ուսուցչին ու Խոնարիին հավերժորեն պահելով անեղծ ու անընդհատ կասկածով ուղեկցվող մտատանջությունների մեջ, որ քաղցր ու հավերժական է դարձնում սիրո հուշը: Կիրառելով **Խոնարիս** ձևը, մենք ուղղակի փշորում ենք այդ տանջող ու անուշ անուրջը, և խաթարում Բակունիցի քարաքանդակ տեքստի կուտ տրամաբանությունն ու հոգեբանական խորը: Մանավանդ որ՝ խոսքն այստեղ ոչ թե **տարընթերցման**, այլ՝ **մրիպակի** մասին է:

A. H. NIKOGHOSYAN: - *INVESTIGATING A TYPO:* - The article examines a typo in the story "The Khonarh Girl" by Aksel Bakunts, which has a substantial influence on the psychological developments and correct understanding of the idea behind the narrative. Using different facts, the article proposes the correct way to read the original text.

Key words - text, misreading, misprint, academic, psychology, annotation, compiler, publication, version.

¹ **Ռաֆայել Իշխանյան**, Բակունիցի կյանքն ու արվեստը, Երևան, 1974, էջ 151:

Ա. Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ: - **ՊՈ ԾԼԵԴԱՄ ՕԴՆՈՅ ՕՊԵՉԱՏՔԻ:** - В статье рассматривается опечатка в рассказе Аксела Бакунца «Девушка Хонар», которая играет важную роль для правильного понимания психологических развитий и общей идеи данного произведения. Предлагается правильное прочтение оригинала с сопоставлением различных фактов.

Ключевые слова - текст, неправильное прочтение, ошибка, академичность, психология, аннотация, компилятор, публикация, версия.

REFERENCES

- Aksel Bakunc, Mtnadzor, Yerevan, 1927 (In Armenian).
- Rafayel Ishkhanyan, Bakunci kyanqy ev gortsy, Yerevan, 1974 (In Armenian).